թյամբ ու պատվով մասնակցել ես հարազատ Ուկրաինայի ու Մոլդավիայի և միլիոնավոր սովետական քաղաքացիների ազատագրման համար գերմանական զավթիչների դեմ մղվող մարտերին»[1]։

Պատերազմի հաղթանակից հետո մարտերում կոփված ռազմիկը վերադառնում է հայրենի Բազմաբերդ գյուղը և ակտիվ կերպով մասնակցում կոլտնտեսության աշխատանքներին։

Սոնյան 1949 թ. տեղափոխվում է Երևան. մի քանի տարի է ինչ նա աշխատում է Երևանի առաջին ավտոբուսային պարկում։

Կովկասի ակտիվ պաշտպաններից է ՍՄԿԿ անդամ Համբիկ Թամազյանը։ Նա ծնվել է 1922 թ. Հայկական ՍՍՌ Աշտարակի շրջանի Աշտարակ գյուղում։ 1940 թ. ավարտում է գյուղի միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցնում սկզբում խնայդրամարկղում որպես վերահսկիչ, իսկ հետո պետապում որպես ավագ տեսուչ։ Համբիկը, որպես լավագույն կոմերիտական, ընտրվում է շրջանային գործադիր կոմիտեի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար։

Հ. Թամազյանը Կովկասի հերոսական պաշտպանության օրերին կամավոր կերպով մեկնում է Կարմիր Բանակ, սովորում և դառնում զենիթային հրետանավոր։ Նա գերազանց տիրապետելով հրաչափ գործիքին, արագորեն հայտնաբերում է հակառակորդի ինքնաթիռները, նրանց շարժման ուղղությունը և օգնում զենիթայիններին ժամանակին հարվածելու թշնամու ավիացիային։

1943 թ. սկզբներին Արմավիր քաղաքի ազատագրման համար մղված համառ մարտերի ժամանակ, հիտ-

[1] ՀԳՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 3, թ. 5։



լերականները ուժեղ կրակ են բացում մեր պաշտպանության դիրքերի վրա, նրանց ինքնաթիռներն անընդհատ օդ էին բարձրանում, ռմբակոծում և խանգարում մեր մարտիկների առաջխաղացմանը։

Ռազմա-օդային դիվիզիոնի հրամանատարը, հեռաչափային ջոկի հրամանատար Համբիկ Թամազյանին առաջադրանք է տալիս որոշել օդ բարձրացող թշնամու ինքնաթիռների ուղղությունը։ Հեռաչափային ջոկը արագորեն ճշտում է ինքնաթիռների ուղղությունը և հայտնում հրամանատարությանը։ Երբ հակառակորդի ինքնաթիռները մոտենում են մեր պաշտպանության գծին, զենիթայիններն անմիջապես կրակ են բացում և ցրում թշնամու ինքնաթիռների խումբը, իսկ մի քանիսին ոչնչացնում, որի հետևանքով խափանվում է թշնամու ավիացիայի այդ օրվա հարձակումն Արմավիր և Կրոպոտկին քաղաքների վրա։

Հեռաչափային ջոկի հրամանատար Թամազյանը և նրա մարտական ընկերուհիները՝ եֆրեյտոր Նինա Շկարուպինան, Սառա Սաֆարովան, հետագա մարտերում նույնպես աչքի են ընկնում ուշիմությամբ, աչալրջությամբ. նրանք կարողանում են արագորեն որոշել հակառակորդի ինքնաթիռների ուղղությունը։

Հարազատ Կովկասի ազատագրման համար մղվող մարտերում անձնուրաց սխրագործությունների համար Թամազյանը հրամանատարության կողմից երկու անգամ արժանանում է պատվոգրի[1] և պարգևատրվում «Մարտական ծառայությունների համար» մեդալով։ Պատվոգրերից մեկում գրված է. «Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմում հակաօդային պաշտպանության գործում հանդես բերած մարտական

[1] ՀԳՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 55ա, թ. 1։